ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ ՔՀԿ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ (ՀԱՄԱ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

(2019-2021թթ.)

Կառուցվածք

«Հայաստանի գյուղատնտեսական դաշինք» ՔՀԿ կոալիցիայի (համա)ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. *Ներածություն*
2. *Ծրագրի մասին*
3. *«Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Հայաստանի գյուղատնտեսական դաշինք» ՔՀԿ կոալիցիայի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման գործողությունների և միջոցառումների ծրագիր*
4. *Միջոցառումների և գործողությունների ծրագիր*
5. *Հնարավոր դոնոր կազմակերպությունների նախնական ցանկ*
6. *Ամփոփում*
7. *Լրացուցիչ*
8. *«Հայաստանի գյուղատնտեսական դաշինք» ՔՀԿ կոալիցիայի անդամ կազմակերպությունների կոնտակտային տվյալներ*

1. Ներածություն

ՕքսԵՋԵՆ» Երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամը, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը, ՎԻՍՏԱԱ Փորձագիտական կենտրոն խորհրդատվական ՀԿն, ՇԵՆ բարեգործական հասարակական կազմակերպությունը, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամը, ՊրոՄեդիա_ Գենդեր ՀԿ, Իրազեկ» համայնքների զարգացմանն աջակցող ՀԿ, կազմելով «Հայաստանի գյուղատնտեսական դաշինք» ՔՀԿ կոալիցիան, որը ձևավորվել է դեռևս 2011թվականին, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացրեցին «Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ենթադրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 25.000.000 ՀՀ դրամ, որից «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրից հայցվել է 22.500.000 ՀՀ դրամ, իսկ դիմողի ֆինանսական ներդրման չափը 2.500.000 ՀՀ դրամ է, որը կազմում է ծրագրի ընդհանուր արժեքի 10 տոկոսը նախատեսվում է ապահովել Կոնսորցիումի անդամներիների և այլ աղբյուրների համաֆինանսավորման տեսքով:

Գյուղատնտեսական Դաշինքի կողմից Ծրագրի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը քննարկվել է Ծրագիրը իրականացնող կազմակերպությունների կոնսորցիումի, Ծրագրի աշխատակազմի անդամների ինչպես նաև Կոալիցիայի անդամների հետ: Վերջնականացնելուց հետո պլանը կներկայացվի «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվող կոնսորցիումին այն քննարկելու համար:

Դաշինքի կողմից Ծրագրի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը վերանայվում է յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության ավելի կարճ ժամկետներում:

2. Ծրագրի մասին

2018 թվականի ապրիլ ամսին Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ազորա Սենթրալ Յուրըփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրիրը Հայաստանի ՔՀԿ-ների համար հայտարարել էր ծրագրի շրջանակներում ծրագրային 9 թիրախ ոլորտներում ՔՀԿ-ների կոալիցիաների (ցանցերի) համար հանրային քաղաքականությունների բարելավման, ջատագովության և մշտադիտարկման ենթադրամաշնորհների մրցույթ:

«ՕքսԵՋԵՆ» Երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամը, «Հայաստանի գյուղատնտեսական դաշինք» կոալիցիայի իր գործընկերներ Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն, ՎԻՍՏԱԱ Փորձագիտական կենտրոն խորհրդատվական ՀԿ, ՇԵՆ բարեգործական հասարակական կազմակերպություն, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամ, ՊրոՄեդիա_Գենդեր ՀԿ և «Իրազեկ» համայնքների զարգացմանն աջակցող ՀԿ-ի հետ համատեղ կոնսորցիումով «Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» անվանումով ծրագրային հայտ են (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացրել նշված ենթադրամաշնորհային մրցույթի «Գյուղատնտեսություն» ոլորտին և հաղթել են: Ծրագրի իրականացումը ղեկավարվում է «ՕքսԵՋԵՆ» Երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի կողմից: Ծրագրի իրականացմանը մասնակցել են նաև «Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի» անդամ այլ կազմակերպություններ(ընդհանուր թվով 20):

Ծրագրի ընդհանուր (հիմնական) լայն նպատակն է նպաստել Հայաստանում գյուղատնտեսության կայուն զարգացմանը՝ ագրարային քաղաքականության բարելավման միջոցով:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ագրարային քաղաքականության բարելավմանն ուղղված առնվազն յոթ առաջարկությունների ներկայացում, որոնցից առնվազն երկուսը, որպես մշակված հայեցակարգային դրույթներ, ներառվել են գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականության օրակարգում:

Այս համատեքստում նախագիծը թիրախավորել է գյուղատնտեսության ոլորտում արդար մրցակցություն ապահովող քաղաքականության բարելավմանը նպաստելու համար Գյուղատնտեսական դաշինքը հզորացնելու, ինչպես նաև

գյուղատնտեսական կոոպերատիվների կայացմանը և հզորացմանը, որպես փոքր ֆերմերների ռեսուրսները միավորելու, արդյունավետ օգտագործելու և շուկայում մրցունակություն ապահովելու միջոցի վրա:
Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվել և իրականացվել է Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի հենքի վրա մշակված ագրարային քաղաքականության բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում, որի մի մասը արդեն ներառվել է գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականության օրակարգում:

Ծրագրի առանձնահատուկ նպատակներն են.

1. Հզորացնել Գյուղատնտեսական դաշինքը գյուղատնտեսության ոլորտում **արդար մրցակցություն** ապահովող քաղաքականության բարելավմանը նպաստելու համար:
2. Նպաստել **գյուղատնտեսական կոոպերատիվների** կայացմանը և հզորացմանը, որպես փոքր ֆերմերների ռեսուրսները միավորելու, արդյունավետ օգտագործելու և շուկայում մրցունակություն ապահովելու միջոց*:*

Ծրագրում առանձնացված խնդիրներն ընդգրկված են նաև Հայաստանի Գյուղատնտեսական դաշինքի օրակարգում և համահունչ են Դաշինքի նպատակներին և գործելաոճին:

Առանձնահատուկ նպատակ 1-ի իրականացման համար անհրաժեշտ գործողություններն են.

- Նախատեսվում է գյուղատնտեսության վարման առանձնահատուկ չորս տարբեր գոտիներ ունեցող ՀՀ 4 մարզերում ավելի քան 100 ֆերմերեների (այդ թվում՝ կոոպերատիվների անդամների) ու ոլորտի այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ մասնակցությամբ անցկացնել տարաբեր աշխատաժողովներ,
- Երևանում «Ֆերմերների կոնգրեսի» կազմակերպում և անցկացում, որի ընթացքում կվերհանվեն ու կքննարկվեն ոլորտի խնդիրները, դուրս կբերվեն առաջնահերթ լուծում պահանջող առնվազն չորս խնդրի լուծման ամենաիրատեսական սցենարները:
- ՔՀԿ-կառավարություն Chatham House և մարզային Town Hall ձևաչափով աշխատանքային խմբերի կողմից հայեցակարգային փաստաթղթերի կամ դրույթների (առաջարկություններ) մշակում, որոնք կներկայացվեն համապատասխան պետական մարմիններին:
- Պետական քաղաքականության օրակարգում այդ առաջարկությունների ընդգրկմանը և ընդունմանը նպաստելու նպատակով ակտիվ ջատագովության անցկացում, այդ թվում՝ ԶԼՄ-ների հետ աշխատանքի ու տարատեսակ հանրային միջոցառումների միջոցով:

- Այդ հատուկ նպատակի ներքո պետական օժանդակության առնվազն մեկ ծրագրի մոնիտորինգի իրականացում: Մոնիտորինգի արդյունքում ձևավորված առաջարկությունների ընդունմանն ուղղված ակտիվ ջատագովություն:
- Հանրային քննարկումների շարք՝ ուղղված Գյուղմթերքի շուկայում արդար մրցակցությունն ապահովող քաղաքականությունների իրականացմանը:
- Դաշինքի մոնիտորինգային թիմի ձևավորում և մոնիտորինգ իրականացնելու կարողությունների զարգացում
- Պետական օժանդակության ծրագրի մոնիտորինգ և դրա արդյունքների հանրայնացում, առաջարկությունների ընդունմանն ուղղված ջատագովություն:

Առանձնահատուկ նպատակ 2-ի՝ Գյուղատնտեսական կոոպերատիվների ինստիտուտի կայացմանը նպաստելու, նրանց գործունեությունը խթանելու, կոոպերատիվների գործունեությունը կարգավորող իրավական դաշտը բարելավելու, ինչպես նաև պետական օժանդակության գործուն մեխանիզմների սահմանելը իրականացնելու համար անհրաժեշտ գործողություններն են.

- Գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրություն/հետազոտության իրականացում.
  - գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացմանն ուղղված պետական օժանդակության ծրագրային առաջարկությունների մշակում,
- Քաղաքականության երկու հայեցակարգային փաստաթղթի /Policy paper/ (առաջարկությունների երկու փաթեթի) ձևավորում:
- Առաջարկությունների փաթեթի ներկայացում համապատասխան պետական մարմիններին:
- Ջատագովության իրականցում՝ ուղղված ներկայացված առաջարկությունների ընդունմանն ու իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելուն:
- «Գյուղմթերքի կին հերոս» մրցանակաբաշխության անցկացում:

Ծրագրային գործողությունները լուսաբանվում են ծրագրի կայքէջի, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կայքի, Իրավաբան.net անկախ լրատվական կայքի և այլ ԶԼՄ-ների կողմից:

Ծրագիրը մեկնարկվել է 2018 թվականի մայիսին՝ 12 ամիս տևողությամբ:

Ծրագրի շրջանակներում որպես թիրախային ոլորտ ընտրված է գյուղատնտեսության ոլորտը։

3. «Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի» կարողությունների զարգացման նպատակով ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման գործողությունների և միջոցառումների ծրագիր

Ծրագրային գործողությունները ապահովելու նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգավելու նպատակով կազմվել է հնարավոր դոնոր կազմակերպությունների ***նախնական ցանկ*** և ***միջոցառումների ու գործողությունների նախագիծ***:

Ցանկում ընդգրկվել են Հայաստանում ինչպես նաև արտասահմանյան երկրներում գործող միջազգային դոնոր կազմակերպություններ, արտասահմանյան երկրների խոշոր հիմնադրամներ, ոլորտում ակտիվ դոնոր կազմակերպություններ, որոնք գործունեություն են ծավալում Անդրկովկասյան տարածաշրջանում կամ Հայաստանում և հետաքրքրված են համագործակցել «Հայաստանի գյուղատնտեսական դաշինք» հետ, ցանկանում են իրականացնել համատեղ ծրագրեր կամ ֆինանսավորել իրականացվող ծրագրերի բաղադրիչներ: Ցանկը պարբերաբար թարմացվելու և ավելացվելու է:

Կապ է հաստատվելու համանման ծրագրեր իրականացնող կոալիցիաների և կոնսորցիումների հետ, որոնք կհետաքրքրվեն «Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի» առաջնահերթությունների իրականացմամբ:

Ներկայումս սփյուռքի ներկայացուցիչները հակված են անմիջականորեն աշխատել հասարակական կազմակերպությունների հետ որոշակի ֆինանսական օժանդակություն հատկացնելով ՔՀԿ-ներին ժողովրդավարական արժեքները զարգացնելու և ամրապնդելու, ինչպես նաև քաղաքականությունների ձևավորման, հանրային վերահսկողության, ՔԿՀ-ների մասնակցությունն ու ներգրավվածությունը կառավարության գործունեության տարբեր ոլորտներում ինչպես նաև գյուղատնտեսության կայուն զարգացման և ագրարային քաղաքականության բարելավման ոլորտներում ՔՀԿ-ների և ՔՀԿ կոալիցիաների կարողությունները ուժեղացնելու համար:

Այս նպատակները իրականացնելու համար աշխատանքներ են տարվում հետևյալ ուղղություններով.

Դաշինքի ֆինանսական միջոցների հայթայթման խմբի և անդամ կազմակերպությունների ղեկավարների կողմից պարբերաբար կատարվում և կատարվելու են ֆինանսական միջոցների հայթայթման աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

1. *Հայաստանում և արտերկրներում, գործող, ինչպես նաև ոլորտում ակտիվ դոնոր, միջազգային և արտասահմանյան կազմակերպություններին՝ Ծրագրի (կոալիցիայի) համաֆինանսավորման նոր հնարավորությունների որոնման և հայտնաբերման համար,*

2. *Միացյալ Նահանգներում, Եվրոպական Միությունում, Ռուսաստանի Դաշնությունում և այլ երկրներում բնակվող հայ համայնքին՝ ֆինանսավորման նոր հնարավորությունների որոնման և հայտնաբերման համար,*

3. *Հայաստանում գործող բիզնեսի ներկայացուցիչներին՝ ֆինանսավորման նոր հնարավորությունների որոնման և հայտնաբերման համար,*

4. *ՀՀ կառավարության, կառավարության ծրագրերով նախատեսված ՔՀԿ սեկտորին տրամադրվող դրամաշնորհային հնարավորությունների օգտագործում,*

5. *Առցանց ֆինասավորման աղբյուրներ,*

6. *Այլ աղբյուրներ:*

4. Միջոցառումների և գործողությունների ծրագիր

«Հայաստանի գյուղատնտեսական դաշինք» ՔՀԿ կոալիցիայի

Ֆինասական միջոցների հայթայթման միջոցառումների ու գործողությունների նախագիծ

#	Միջոցառումներ	Գործողություններ	ժամկետներ	Նշումներ	Պատասխանատուներ
1.	Միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների, ոլորտում ակտիվ դոնոր կազմակերպությունների հետ հարաբերությունների հաստատում, ընդլայնում և զարգացում:	Ծանոթանալ միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների ինտերնետային էջերին, նրանց ռազմավարությանը, հետաքրքրության ոլորտներին և շրջանակներին, հետաքրքրության շրջանակներում գտնվող տարածաշրջաններին և երկրներին, դրամաշնորհների հատկացման պահանջներին, ֆինանսավորվող ծրագրերի ուղղվածությանը, շահառուների որ խմբերին են սատարում, ինչպիսի կազմակերպությունների հետ են համագործակցում: Համապատասխան բովանդակությամբ համագործակցության-առաջարկ նամակների պատրաստում և ուղարկում: Անհրաժեշտության դեպքում ուղարկել նաև ծրագիր առաջարկի կոնցեպցիան կամ բուն ծրագիր առաջարկը:	տարվա ընթացքում Ամիսը առնվազն 2-3 կազմակերպության	Կապ է հաստատվել, *նշել թե ում հետ*	Ֆինասական միջոցների հայթայթման խումբ, Ծրագրի ղեկավար Հասարակական կապերի պատասխանատու Կոնսորցիումի / կոալիցիայի անդամներ Ծրագրի փորձագետներ
2.	Դոնոր կազմակերպությունների	Ծանոթանալ միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների	տարվա ընթացքում		Ֆինասական միջոցների

	վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման համար անհրաժեշտ նյութերի հավաքում:	կայքէջերին, նրանց ռազմավարությանը, հետաքրքրության ոլորտներին և շրջանակներին, հետաքրքրության շրջանակներում գտնվող տարածաշրջաններին և երկրներին, դրամաշնորհների հատկացման պահանջներին, ֆինանսավորվող ծրագրերի ուղղվածությանը, շահառուների որ խմբերին են սատարում, ինչպիսի կազմակերպությունների հետ են համագործակցում: Մշակել տվյալների բազայի տարբերակ Excel կամ այլ ծրագրի հիման վրա: Ինֆրոմացիան տեսակավորել և մուտքագրել տվյալների բազայում:	Տարվա ընթացքում		հայթայթման խումբ/համակարգող,
3.	Դոնոր կազմակերպություններին համագործակցության-առաջարկ նամակների ուղարկում:	Համապատասխան բովանդակությամբ համագործակցության-առաջարկ նամակների պատրաստում և ուղարկում: Անհրաժեշտության դեպքում ուղարկել նաև ծրագիր առաջարկի կոնցեպցիան կամ բուն ծրագիր առաջարկը:	Ամիսը առնվազն 2-3 կազմակերպության		Ֆինասական միջոցների հայթայթման խումբ/համակարգող,
4.	Տեղական դոնոր կազմակերպությունների հետ գործնական	Հանդիպումներ ՀՀ տարածքում գործող դոնոր կազմակերպութոյունների ներկայացուցիչների հետ, մասնակցություն	Տարվա ընթացքում		Ֆինասական միջոցների

	հարաբերությունների հաստատում	նրանց կողմից կազմակերպած միջոցառումներին, համապատասխան առաջարկների ներկայացում, շփման եզրեր գտնելու գործողությունների իրականացում:			հայթայթման խումբ/համակարգող, Ծրագրի ղեկավար, Հասարակական կապերի պատասխանատու, մասնագիտական հանձնաժողովների ղեկավարներ, Կոնսորցիումի անդամներ Ծրագրի փորձագետներ
5.	Մասնավոր սեկտորի հետ հարաբերությունների ստեղծում տեղական ներդրումի ծավալի մեծացման նպատակով:	Համապատասխան բովանդակությամբ համագործակցության-առաջարկ նամակների պատրաստում և ուղարկում:	տարվա ընթացքում		Ծրագրի ղեկավար և թիմի անդամներ Ֆինասական միջոցների հայթայթման խումբ/համակարգող, Հասարակական կապերի պատասխանատու Կոնսորցիումի անդամներ

6.	Հովանավոր գործընկերների ներգրավում	Գտնել առնվազն բիզնես կազմակերպություններ, որոնք կհամաձայնվեն ֆինանսական ներդրում կատարել Ծրագրում:			Ծրագրի ղեկավար, Ֆինասական միջոցների հայթայթման խումբ/համակարգող, Հասարակական կապերի պատասխանատու Կոնսորցիումի անդամներ
7.	Դրամաշնորհային ծրագրեր կազմելու դասընթացի կազմակերպում Կոնսորցիումում/կոալիցիայում ներգրավված կազմակերպությունների շահագրգիռ անդամների համար	Կազմել դասընթացների անցկացման ժամանակացույց և ծրագիր ֆինանսավորող կազմակերպություններին ներկայացնել քիկ-ների կողմից կազմված դրամաշնորհային ծրագիր ֆինանսավորող կազմակերպություններին ներկայացնել առնվազն երկու դրամաշնորհային ծրագիր			Ֆինասական միջոցների հայթայթման խումբ/համակարգող, Հասարակական կապերի պատասխանատու, Ծրագրի փորձագետներ
8.	Առնվազն 2 նոր դոնորի հետ հարաբերությունների հաստատում				Ծրագրի ղեկավար, Ֆինասական միջոցների հայթայթման խումբ/համակարգող,

					Հասարակական կապերի պատասխանատու Կոնսորցիումի անդամներ Ծրագրի փորձագետներ
9.	Օգտագործել հնարավոր աղբյուրներ (գովազդ, ներքին կապեր) բիզնես կառույցների հետ համագործակցելու համար.	Գտնել բիզնես կազմակերպություն, որը կհամաձայնվի որոշակի ֆինանսական ներդրում կատարել Ծրագրում կամ այլ կերպ օժանդակել ծրագրի իրականացմանը առաջիկա երեք տարիների ընթացքում:			Ծրագրի ղեկավար, Ֆինասական միջոցների հայթայթման խումբ/համակարգող, Հասարակական կապերի պատասխանատու Կոնսորցիումի անդամներ
10	Աշխատել նոր դոնոր կազմակերպությունների հայտնաբերման ուղղությամբ.	Առնվազն երկու նոր դոնորից ֆինանսավորման ստացում:			Ծրագրի ղեկավար, Ֆինասական միջոցների հայթայթման խումբ/համակարգող,

					Հասարակական կապերի պատասխանատու Կոնսորցիումի անդամներ (ՓՄՁ ասոցիացիա)
11	Ֆինասավորման համար նախատեսված ծրագիր առաջարկների պատրաստում և թարգմանություն	Պատրաստել ծրագիր առաջարկներ, թարգմանել և ուղարկել համապատասխան դոնոր կազմակերպություններին կամ հայտարարված դրամաշնորհային մրցույթներին մասնակցելու համար			Ծրագրի ղեկավար, Ֆինասական միջոցների հայթայթման խումբ/համակարգող, Հասարակական կապերի պատասխանատու Կոնսորցիումի անդամներ
12					
13					
14					
15					
16					

5. Հնարավոր դոնոր կազմակերպությունների նախնական ցանկ

1.	The US Embassy Democracy Commission Small Grants Program Competition Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի մրցույթ (1-ին փուլ) https://armenia.usembassy.gov/demcom.html
2.	**Vishegrad fund**
3.	**PBA**
4.	**Fundacja Partnerstwo Dla Spodowiska**
5.	The German Marshall Fund of the United States (GMF) Project proposals must be sent to
6.	National Endowment for Democracy (NED) proposals@ned.org INFO@NED.ORG<INFO@NED.ORG>
7.	The German Marshall Fund of the United States (GMF) Project proposals must be sent to BlackSeaTrust@gmfus.org

Օն-լայն ֆինասավորման աղբյուրներ

1.	**http://www.insidephilanthropy.com/**
2.	**https://www2.fundsforngos.org/**
3.	https://www.ihrfg.org/funder-directory-search
4.	http://www.insidephilanthropy.com/funding-for-global-security/sigrid-rausing-trust-grants-for-human-rights.html
5.	https://am.usembassy.gov/education-culture/grants-program/small-grants-program/

ՀՀ-ում դոնորների վերաբերյալտեղեկատվություն տրամադրող կայքեր և պետական ֆինանսավորում ստանալու աղբյուրներ

1.	www.hkdepo.am
2.	www.civilsociety.am
3.	www.erit.am/programs
4.	www.procurement.am
5.	
6.	

**** Յանկը լրացվելու է*

6. Ամփոփում

«Հայաստանի գյուղատնտեսական դաշինք» ՔՀԿ կոալիցիայի (համա)ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը նախատեսվում է 2019-2022 թվականների համար, որը նախատեսվում է վերանայել կես տարին մեկ անգամ: Ծրագրի ֆինանսավորման և ֆինանսների հայթայթման պլանի իրականացման համար անհրաժեշտ է.

- ստեղծել, վարել և պարբերաբար թարմացնել պոտենցիալ դոնորների և ֆինանսավորողների բազան,
- ստեղծել և պարբերաբար թարմացնել ֆինանսական միջոցների հայթայթման համար անհրաժեշտ գործիքներ,
- դարձնել կայուն և զարգացնել պոտենցիալ դոնորների և ֆինանսավորողների հետ հարաբերությունները (նամակագրության, հանդիպումների, հաղորդակցման ժամանակակից տեխնոլոգիաների, այդ թվում սոցիալական ցանցերի հնարավորությունների (Սքայփ, ՖԲ, Վայբեր և այլն) օգտագործման միջոցով ,
- ծրագրի շրջանակներում կազմակերպել ֆինանսական միջոցների հայթայթման հարցերով զբաղվող թիմի անդամների վերապատրաստումը,
- մշակել այլ անհրաժեշտ փաստաթղթեր, իրականացնել այլ անհրաժեշտ գործողություններ և աշխատանքներ:

7. Լրացուցիչ

1 Ֆոնդահայթայթման պլանի համար անհրաժեշտ այլ գործողություններ

Ընթացիկ տարվա ցուցանիշները և հաջորդ տարվա կանխատեսումներ[1]

ԱՂԲՅՈՒՐ	ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ Եկամուտ	ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ Ծախս	ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ Եկամուտ	ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ Ծախս
Անհատ դոնորներ				
IT Solution Col Log	35000 USD	25000 USD		10000 USD
US Embassy small Grants	48000 USD	16000 USD		32000USD
Vishegrad	49000 USD	10000 USD		39000 USD
Ընդամենը	132000USD	51000 USD		81000USD
Անդամավճար/ Անդամների Ներդրում	1500USD	1500 USD	1500 USD	1500 USD
Ընդամենը	133500USD	52500 USD	1500USD	82500USD

2 Առկա ռեսուրսների հաշվառում

Ֆինասական միջոցների հայթայթման նպատակով կատարվել է անհրաժեշտ համապատասխան մարդկային ներուժ/ռեսուրսների նախնական հաշվառում և ստեղվել է Ֆինասական միջոցների հայթայթման խումբ:

Ո՞Վ	ՔԱՆԻ՞ ՀՈԳԻ	Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆԵԼ
Խորհրդի անդամներ	3 համանախագահող և համակարգող	Ֆոնդահայթայթում, ռեսուրսների կառավարում, ջատագովություն, մոնիտորինգի

[1] http://www.fundraising123.org/files/KleinNP911_Fund_Plan_Worksheet.pdf

		իրականացում և դոնորին հաշվետվություն
Աշխատակազմ (ներառյալ ծրագրային աշխատողները)	Փորձագետների խումբ, 5 հոգի	Աջակցել խորհրդին, խորհրդատվություն և ջատագովություն
Կամավորներ (ներառյալ նախկին խորհուրդը և աշխատակիցները, անդամներ, աջակիցներ)	Դաշինքի անդամ կազմակերպությունների աշխատակիցներ	Ծրագրի գործողություններ, ջատագովություն
Այլ անձինք	Շահագռգիռ անձինք կառավարությունից, ոլորտի տեղական և միջազգային կազմակերպություններից	Ջատագովություն

8. *«Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի»* անդամ կազմակերպությունների կոնտակտային տվյալներ

1. ***«ՕքսԷՋեն» Երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ***

   Հասցե՝ Դավիթ Անհաղթի 23, N19, Երևան

   Հեռախոս՝ +37411 30 88 08

   Էլ. հասցե՝ info@oxygen.org.am

   Կայք՝ http://www.oxygen.org.am

2. ***Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն***

   Հասցե՝ Տերյան 74, Երևան

   Հեռախոս՝(+374 10) 52 28 39, 56 96 70, ext. 12, 21

   Էլ. հասցե՝info@icare.am

   Կայք՝http://www.icare.am

3. ***ՎԻՍՏԱԱ Փորձագիտական կենտրոն խորհրդատվական ՀԿ***

   Հասցե՝ Սայաթ-Նովա 29, բնակարան 2, Երևան

   Հեռախոս՝+374 60 522 921

   Էլ. հասցե՝mnikoghosyan@vistaa.org

   Կայք՝ http://www.vistaa.org

4. ***ՇԵՆ բարեգործական հասարակական կազմակերպություն***

   Հասցե՝Նալբանդյան 110. Երևան

   Հեռախոս՝+374 10 567031

   +374 (60) 499010

   Էլ. հասցե՝ info@shen.am

   Կայք՝www.shen.am

5. ***«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամ***

   Հասցե՝Ազատության 1/21-40, Երևան

   Հեռախոս՝+374 60 440-550

   Էլ. հասցե՝card@card.am

   Կայք՝http://www.card.am

6. ***ՊրոՄեդիա_ Գենդեր ՀԿ***

   Հասցե՝Թումանյան, 11ա/58, Երևան

   Էլ. հասցե՝womennetam@gmail.com promediagender_arm@yahoo.com

   Կայք՝womennet.am

7. ***«Իրազեկ» համայնքների զարգացմանն աջակցող ՀԿ***

   Հասցե՝Դաշտոյան 27, բն. 17, Գավառ

   Էլ. հասցե՝ irazek_ngo@yahoo.com

« Գյուղատնտեսական դաշինքի կարողությունների զարգացման» ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է Եվրամիության կողմից ֆինանսավորվող « Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում՝ Գյուղատնտեսական դաշինքի անդամ 7 կազմակերպությունների միջոցով:

Եվրոպական Միության ֆինանսավորմամբ գործարկվող « Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է « Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկերներ՝ « Ագորա Սենթրլ Յուրոպի» ՀԿ-ն (Չեխիա), Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնի (ՍԻՎԻՏԱՍ), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի և Հայաստանի համայնքների միության հետ համագործակցությամբ:

"Capacity building of Agricultural Alliance" Project is implemented within the framework of EU funded "Commitment to Constructive Dialogue" Project.

The "Commitment to Constructive Dialogue" project is implemented with the financial support of the European Union by a consortium of civil society organizations, which are the "Armenian Lawyers' Association" NGO, Agora Central Europe o.p.s (an NGO from the Czech Republic), the "Armenian Center for Democratic Education-CIVITAS" NGO, the "International Center for Human Development" Public Organization, the "SME Cooperation Association" NGO and the Union of Communities of Armenia.